



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից “03” 06. 2016 թ. (արձ. № __)	Վավերացնում եմ ՀԱԱՀ ռեկտոր _____ Ա. Թարվերդյան “06” 06. 2016թ.
--	---

ՀԱԱՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՓԸ 10.1. - 2016

ԵՐԵՎԱՆ 2016



Բովանդակություն

1. Ներածություն
2. ՀԱԱՀ առաքելությունը
3. Համալսարանի տեսլականը
4. ՀԱԱՀ որակի ապահովման սկզբունքները
5. ՀԱԱՀ-ում որակի ապահովման համակարգի զարգացման ուղղությունները
6. ՀԱԱՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ռազմավարությունը
7. ՀԱԱՀ-ի որակի ապահովման քաղաքականությունը
8. Որակի ապահովման համակարգում ներգրավված համալսարանական հիմնական ստորաբաժանումներն ու կառույցները և նրանց միջև պարտականությունների բաշխումը



1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- 1.1. *Հայաստանի ազգային ագրարային համալսարանի զարգացման ռազմավարական պլանը* սահմանում է համալսարանի առաքելությունը, տեսլականը, առաջնությունները, գլխավոր նպատակներն ու դրանց իրականացման հիմնական ուղիները:
- 1.2. *Ռազմավարական պլանը* բացահայտում է համալսարանի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություն է ընձեռում ապագան կանխատեսելու, պլանավորված կերպով սահմանված խնդիրները լուծելու ու առկա խոչընդոտները հաղթահարելու և սահմանված նպատակների իրագործումով՝ համալսարանը դարձնել ավելի հզոր ու գործունակ:
- 1.3. Ռազմավարական պլանը ներառում է ՀԱԱՀ-ի մասնագիտական կրթության որակի ապահովման ռազմավարության նպատակը և խնդիրները:
- 1.4. ՀԱԱՀ-ի որակի ապահովման քաղաքականությունը մշակվում և իրականացվում է ելվելով համալսարանի առաքելությունից, տեսլականից և ռազմավարությունից:
- 1.5. ՀԱԱՀ-ի որակի ապահովման քաղաքականությունը ուղղված է կրթական ծրագրերի, կրթական ծառայությունների, գիտական և ինովացիոն գործունեության որակի երաշխիքի ապահովմանը:
- 1.6. ՀԱԱՀ-ի որակի ապահովման քաղաքականությունը ուղղված է որակի ոլորտի նպատակների և խնդիրների իրականացմանը:

2. ՀԱԱՀ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը լինելով Հայկական գյուղատնտեսական և Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտների իրավահաջորդն ու ավանդույթների կրողը՝ հանրապետությունում ագրարային ոլորտի բարձրագույն կրթությամբ մասնագետներ պատրաստող միակ կրթական հաստատությունն է:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի առաքելությունն է համակենտրոնացնելով կրթության ու գիտության կադրային և նյութական ռեսուրսները, ինտեգրելով գիտական հիմնարար հետազոտությունների արդյունքները և նվաճումները, ինտենսիվ ավելացնելով հետազոտական ներուժը և ապահովելով որակյալ կրթություն՝ Հայաստանում ու տարածաշրջանում դառնալ ագրարային ոլորտի աշխատաշուկայի ժամանակակից պահանջները բավարարող և դրանց դինամիկ փոփոխությունները հաշվի առնող առաջատար կրթական, գիտահետազոտական և խորհրդատվական ծառայություններ մատուցող կենտրոն:

Համալսարանն իր ապագան պետք է կառուցի հաշվի առնելով երկրի սոցիալ-տնտեսական զարգացման դինամիկան, Հայաստանի մուտքը համաշխարհային տնտեսական հարթություն, արտադրության, կրթության և հասարակական կյանքի այլ ոլորտներում նոր տեխ-



նույն ժամանակահատվածում, ինչպես նաև Հայաստանում ինֆորմացիոն հասարակության ձևավորումը:

3. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆ

Համալսարանն օգտագործելով իր մարդկային և նյութական ողջ ներուժն ու կարողությունները՝ դառնալու է ագրարային կրթության ու գիտության բնագավառում ազգային ընդհանուր շահերը արտահայտող, ազգային ու միջազգային մակարդակներում իր կողմից մատուցվող ծառայությունների համադրելիությունը, մրցունակությունը և թափանցիկությունը ապահովող, աշխատաշուկայի հարափափոխ պահանջներին համապատասխան ուսումնառողների կոմպետենցիաների ձևավորմանը նպաստող կրթական միջավայր:

Համալսարանը հանդես է գալու որպես գիտելիք ու առաջավոր տեխնոլոգիաներ տարածող, կրթական ու հետազոտական ինովացիոն գործունեություն իրականացնող, ուսանողակներն սնուցող կրթական միջավայր ու կրթության լայն մատչելիություն ապահովող, որակի մշակույթ ունեցող հաստատություն, որը կծառայի երկրին, ազգին ու աշխարհին:

4. ՀԱԱՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ

Համալսարանի հաջող ղեկավարումը և կառավարումը պահանջում է համակարգված ռազմավարական պլանավորում: Ռազմավարական նպատակները կարող են իրականացվել որակի համակարգի ներդրման և զարգացման արդյունքում, որն պետք է ուղղված լինի համալսարանի բոլոր շահակիցների կարիքների բավարարմանը:

Որակի ապահովման քաղաքականությունը իրականացնելիս Համալսարանի ղեկավարությունը և յուրաքանչյուր աշխատակից հետևում է կրթական ծառայությունների որակի ապահովման հետևյալ սկզբունքներին՝

- ❖ **Որակի ապահովմանը ուղղված կողմնորոշում:** Համալսարանը տրամադրում է որակի այնպիսի մակարդակի կրթական ծառայություններ, որ նրա շահակիցը բավարարված լինի դրանցից:
Շահակիցների բավարարվածությունը Համալսարանի կրթական ծառայությունների որակից պարզելու համար համալսարանը պարբերաբար կազմակերպում է հարցումներ շահակիցների շրջանակներում, իրականացնում է որակի համակարգի անընդհատ բարելավում:
Որակի արդյունավետության բարձրացման նպատակով ՀԱԱՀ-ն կազմակերպում է իրականացնում է կրթական գործունեության և առանձին գործընթացների մշտադիտարկում, ներքին աուդիտներ, կրթական գործունեության բարելավում:
- ❖ **Շահակիցների ներգրավում որակի գնահատման գործընթացներում:** ՀԱԱՀ-ն կենտրոնանում է իր շահակիցների պահանջների և կարիքների վրա: Այդ նպատակով համալսարանը հետադարձ կապի մեխանիզմների միջոցով ձգտում է ներգրավել բոլոր շահակիցներին համալսարանի գործունեության որակի բարելավման գործընթացում:



- ❖ **Համալսարանի ղեկավարության դերը:** Համալսարանի ղեկավարությունը պետք է ձգտի և հասնի համալսարանի կրթական ծառայությունների որակի զարգացման ընդհանուր նպատակների և ուղղությունների միասնականությանը: Նա պետք է ստեղծի որակի կառավարման համակարգ, որը թույլ կտա համալսարանի անձնակազմին ամբողջությամբ ներգրավված լինել ռազմավարական նպատակների հասնելու գործընթացին:
- ❖ **Անձնակազմի ներգրավումը որակի կառավարման գործընթացներում:** Համալսարանի բոլոր մակարդակների աշխատակիցների ներգրավվածությունը ռազմավարական նպատակների իրականացման գործընթացներում հնարավորություն է տալիս հասնել դրված ռազմավարական նպատակներին՝ օգտագործելով համալսարանի անձնակազմի ներուժը:
- ❖ **Որակի կառավարման համակարգային մոտեցում:** Համալսարանում իրականացվող կրթական, գիտական և խորհրդատվական գործունեությունը պետք է ունենան համակարգային մոտեցում:
- ❖ **Փաստերի վրա հիմնված որոշումների կայացում:** Համալսարանում որոշումների պետք է կայացվեն հավաքագրված փաստաթղթերի, հավաստի տվյալների և հաշվետվությունների հիման վրա:
- ❖ **Բարելավում:** Համալսարանում որակի ոլորտում տարվող աշխատանքները միտված են կրթության որակի բարելավմանը: ՀԱԱՀ-ի որակ վերահսկման և ինքնավերլուծության բաժինը կրթության որակի բարելավման նպատակով կազմակերպում է հարցումներ շահակիցների շրջանակներում:

5. ՀԱԱՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱԱՀ-ում կրթության որակի ապահովման համակարգի հետագա զարգացումը պետք է իրականացվի հետևյալ ուղղություններով.

- ❖ Որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղենիշների ներդրում:
- ❖ Գիտակրթական գործունեության արդյունավետության շարունակական վերանայում, բարելավում և ինքնավերլուծության իրականացում:
- ❖ Որակյալ և մրցունակ կրթության ապահովում:
- ❖ Կրթական ծրագրերի որակի մշտադիտարկում, վերանայում և բարելավում:
- ❖ Կրթական նոր ծրագրերի ու տեխնոլոգիաների ներդրում և իրականացում:



6. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Համալսարանի Մասնագիտական կրթության որակի ապահովման ռազմավարական նպատակն է Բոլոնիայի գործընթացի պահանջներին համապատասխան որակի ապահովման համալսարանական համակարգի մշակում, ներդրում և հետագա զարգացում:

Ռազմավարական խնդիր 1. Համալսարանի որակի ապահովման քաղաքականության, ընթացակարգերի և ռազմավարության մշակում ու հաստատում, համալսարանին և նրա միջավայրին համապատասխան ու հարմարունակ Որակի ապահովման համալսարանական մոդելի ընտրություն և կազմակերպման կառուցվածքի ձևավորում:

Ռազմավարական խնդիր 2. Որակի ապահովման համալսարանական համակարգի և նրա հիմնական գործառույթների գործառույթն իրականացնող հստակ կանոնների և ընթացակարգերի սահմանում, Որակի ապահովման մասնաճյուղային և ֆակուլտետային ենթահամակարգերի ձևավորում:

Ռազմավարական խնդիր 3. Համալսարանական հանրության շրջանում որակի ապահովման համալսարանական համակարգի ձևավորման անհրաժեշտության, հրատապության և ռազմավարության վերաբերյալ իրազեկում և ներբուհական համընդհանուր հավանության ձեռքբերում, որակի ապահովման ներքին և արտաքին աուդիտների պարբերական իրականացում, համակարգի հետագա լրամշակում ու կատարելագործում:

Ռազմավարական խնդիր 4. ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներին համապատասխան՝ համալսարանի փորձնական ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) հավատարմագրման գործընթացի կազմակերպում և իրականացում:

7. ՀԱԱՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

7.1. Ելակետային դրույթներ

7.1.1. Եվրոպական ENQA ստանդարտ. Բուհերը պետք է ունենան քաղաքականություն և համակցված ընթացակարգեր՝ իրենց ծրագրերի ու որակավորումների որակի և չափորոշիչների համապատասխանության ապահովման համար: Բուհերը պետք է ստանձնեն նաև պարտավորվածություն որակի մշակույթի զարգացման վերաբերյալ, ինչն ընդդրում է որակի և որակի ապահովման կարևորությունը նրանց աշխատանքում: Դրան հասնելու համար բուհերը պետք է զարգացնեն և իրականացնեն որակի շարունակական բարձրացման ռազմավարություն: Քաղաքականությունը, ռազմավարությունը և ընթացակարգերը պետք է պաշտոնական կարգավիճակ ունենան և հանրայնորեն մատչելի լինեն: Դրանք պետք է ներառեն նաև ուսանողների և այլ շահակիցների դերի ձևակերպումը:



- 7.1.2.** ՀԱԱՀ-ն իր ծրագրերի, կրթական աստիճանների որակի և չափանիշների ապահովման համար մշակել է որակի ապահովման քաղաքականություն ու դրան առնչվող ընթացակարգեր, որոնք հետևողականորեն նպաստելու են որակի կարևորությունը և ապահովումը գնահատող միջավայրի զարգացմանը:
- 7.1.3.** Որակի ապահովման քաղաքականության նպատակն է բարձրացնել համալսարանի ուսումնական, գիտահետազոտական և կառավարման գործընթացների որակը և արդյունավետությունը:
- 7.1.4.** Քաղաքականությունը ընդգրկում է համալսարանի գործունեության բոլոր հիմնական ոլորտներում որակի ապահովումը՝ նպատակ ունենալով համապատասխանեցնելու դրանք համալսարանի ռազմավարական նպատակներին և ապահովել ուժերի առավելագույն ներդրում այդ նպատակների իրականացման համար: Այն արտացոլում է համալսարանի առաքելությունն ու որդեգրված արժեքները և սերտորեն կապված է ռազմավարական պլանի և իրականացվող գործընթացների հետ:
- 7.1.5.** Որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը ստեղծում են անհրաժեշտ հենք, որի շրջանակներում համալսարանը ձևավորում է որակի ապահովման իր համակարգը, գնահատում դրա գործունեության արդյունավետությունը:
- 7.1.6.** Քաղաքականությունը ձևակերպում է համալսարանի մտադրությունները որակի ապահովման հիմնահարցերի վերաբերյալ, ինչպես նաև դրանց իրագործման սկզբունքային ուղիները:
- 7.1.7.** Քաղաքականության իրականացման գործընթացը, իր հերթին, պահանջում է որոշակի ընթացակարգային ուղղորդում, որը մի կողմից՝ մանրամասն տեղեկություն է ապահովում այն միջոցների վերաբերյալ, որոնցով իրականացվում է քաղաքականությունը, իսկ մյուս կողմից՝ կարգաբերում և կոնկրետ գործողությունների է վերածում այդ միջոցները:
- 7.1.8.** Որակի ապահովման քաղաքականությունը տարածվում է համալսարանի գործառույթների և գործողությունների բոլոր այն ասպեկտների վրա, որոնք ազդում են կրթական ծրագրերի չափանիշների պահպանման և ապահովման վրա, ինչպիսիք են դասավանդումը, հետազոտական գործունեությունը ուսումնառության աջակցելու ծառայությունները, նյութատեխնիկական բազան, կառավարումը, հանրային ծառայությունները և համագործակցությունը գործատուների հետ:
- 7.1.9.** Որակի ապահովման քաղաքականությունը կենտրոնանում է համալսարանի առաքելությունից բխող նպատակների կատարման ընթացքի որակի ու կրթական ծրագրերի հետագա բարելավման խնդիրների վրա:
- 7.1.10.** Որակի ապահովման քաղաքականության հաջող իրականացման համար համալսարանը հատկացնում է անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ:



- 7.1.11.** Որակի ապահովման համակարգի մշակումը, ներդրումը և անընդհատ կատարելագործումը համալսարանի ղեկավար անձնակազմի առաջնահերթ խնդիրներից մեկն է, ինչը հաշվի առնելով շահակիցների բավարարվածությունը կրթական ծառայությունների շուկայում, գիտական և ինովացիոն գործունեությունում ապահովվում է համալսարանի մրցունակությունը և կայունությունը:
- 7.1.12.** Համալսարանի ղեկավարությունը իր վրա է վերցնում որակի ապահովման ոլորտում անհրաժեշտ պայմանների ստեղծման, սահմանված նպատակներին հասնելու, ինչպես նաև բոլոր մակարդակներում որակի ապահովման համակարգի արդյունավետության անընդհատ բարձրացման պատասխանատվությունը:
- 7.1.13.** Որակի ապահովման քաղաքականությունը, դրա ընթացակարգային հենքը և որակի շարունակական բարձրացման ռազմավարությունը համալսարանի որակի ապահովման համակարգի կարևորագույն բաղադրիչն են, որոնց մշակումից էլ սկսվում է որակի ապահովման համակարգի ձևավորման գործընթացը:

7.2. ՀԱԱՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

- 7.2.1.** Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության արդիականացման և Բոլոնիայի հռչակագրի հիմնադրույթները՝ համալսարանը մշակել և հաստատել է գիտակրթական ոլորտում որակի ապահովման քաղաքականություն:
- 7.2.2.** Կրթության որակի ոլորտում համալսարանի քաղաքականությունը ուղղված է կրթական ծրագրերի, կրթական ծառայությունների, գիտական և ինովացիոն գործունեության որակի երաշխիքի ապահովմանը և որակի համընդհանուր կառավարման սկզբունքների և չափորոշիչների հիման վրա (ENQA)՝ կրթության որակի համակարգի ստեղծմանը և համալսարանի որակի կառավարմանը, ներքին ու արտաքին շուկաներում բարձր մրցունակության ապահովման նպատակով:
- 7.2.3.** Համալսարանի որակի ոլորտի քաղաքականությունը ուղղված է հետևյալ նպատակների իրականացմանը՝
- Շահակիցների պահանջներին և ազգային և միջազգային չափորոշիչներին համապատասխան որակյալ ժամանակակից կրթության ապահովումը:
 - Որակի կառավարման համակարգի արդյունավետության անընդհատ բարելավում:
 - Իրականացվող կրթական ծրագրերի և շնորհող որակավորումների անընդհատ պլանավորում, մշտադիտարկում, վերլուծություն և որակի գնահատում:
 - Հաստատված չափորոշիչների և կարգերի հիման վրա ուսանողների գիտելիքների մակարդակի անընդհատ գնահատում:
 - Դասավանդող անձնակազմի անընդհատ ուսուցում, մասնագիտական մակարդակի բարձրացում և նրանց կոմպետենցիաների գնահատում:



- Համալսարանի տեղեկատվական, նյութատեխնիկական և ուսումնամեթոդական հենքի ձևավորում և անընդհատ կատարելագործում:
- Համալսարանի կրթական ծրագրերի և գործունեության այլ տեսակների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ ինֆորմացիայի հավաքագրում, վերլուծություն և տարածում:
- Համալսարանի կողմից իրականացվող կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ հասարակության անընդհատ տեղեկացում:

7.2.4. Գլխավոր նպատակներից բխում են հետևյալ խնդիրները՝

- Շահակիցների սպասելիքներին համապատասխան որակի ապահովման համակարգի ձևավորում և կատարելագործում:
- Համալսարանի որակի կառավարման ճկուն համակարգի ստեղծում և ներդրում:
- Բարձրագույն կրթության ոլորտում որակի ապահովման լավագույն փորձի ուսումնասիրում և ագրարային ոլորտի կրթության որակի բարձրացում:
- Մասնագիտությունների կրթական ծրագրերի բովանդակային կատարելագործում, ուսումնառողների և դասախոսների ակադեմիական շարժունության ապահովման պայմանների ընդլայնում:
- Համալսարանի դասավանդող անձնակազմի գործունեության, ուսանողների ուսումնառության, կրթական ծառայություններ մատուցող կառույցների գործունեության որակի մշտադիտարկման համակարգի մշակում և ներդրում:
- Իրականացվող կրթական ծառայությունների և կրթական ծրագրերի անընդհատ մշտադիտարկում, որակի մոնիթորինգի և գնահատման անցկացում:
- Հաստատված չափորոշիչների և կարգերի հիման վրա ուսանողների գիտելիքների պարբերաբար գնահատում:
- Դասախոսների և այլ աշխատակիցների աշխատանքի որակի գնահատման տեխնոլոգիաների մշակում և ներդրում:
- Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման շարունակական բարձրացման գործընթացի կազմակերպում, նրանց մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատում:
- Որակի ապահովման համակարգի արդյունավետության ու կատարելագործման և կրթական ծրագրերի իրականացման որակի բարձրացման նպատակով դասավանդող անձնակազմի որակավորման բարձրացում:
- Պրոֆեսորադասախոսական անձնակազմի բարձր մասնագիտական կոմպետենցիաների և որակավորումների անընդհատ բարձրացում:
- Համալսարանի տեղեկատվական, նյութատեխնիկական և ուսումնամեթոդական բազայի ձևավորում և անընդհատ կատարելագործում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

- Որակի ապահովման համակարգի կատարելագործման և նոր կրթական տեխնոլոգիաների և ծրագրերի ներդրման նպատակով առաջատար այլ համալսարանների հետ համագործակցության իրականացում:
- Նյութատեխնիկական բազայի կատարելագործման միջոցով կրթական տեխնոլոգիաների որակի անընդհատ բարձրացում:
- Մասնագիտությունների կրթական ծրագրերի և համալսարանի գործունեության այլ ոլորտների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ ինֆորմացիայի հավաքագրման, վերլուծության և տարածման ապահովում:
- Համալսարանի կողմից իրականացվող կրթական գործունեության որակի վերաբերյալ հասարակության կանոնավոր տեղեկատվության տրամադրման ապահովում:
- Ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով համալսարանի գործունեության որակի վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության ապահովում:
- Որակի ապահովման համակարգի միասնական ինֆորմացիոն միջավայրի ստեղծում:
- Շրջանավարտների պատրաստման որակի անընդհատ բարձրացում:
- Ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և անհրաժեշտ ռեսուրսներով ապահովման կատարելագործում:
- Համալսարանի կրթության որակի ոլորտում` միջազգային և պետական չափորոշիչներին ու պահանջներին համապատասխան գործունեության իրականացում, ժամանակակից որակյալ կրթության ապահովում:
- Համալսարանի անձնակազմի և ուսումնառողների սոցիալական աջակցության ապահովում և նրանց առողջության ու անվտանգության պաշտպանության իրականացում:
- Ֆունդամենտալ և կիրառական գիտության ոլորտներում գիտական ուղղությունների ստեղծման, զարգացման և պահպանման միջոցով գիտահետազոտական մշակումների իրականացում:
- Լրացուցիչ ռեսուրսների ընդգրկման, անձնակազմի որակավորման և գործնական հմտությունների զարգացման, ուսումնական գործընթացի կազմակերպման բազայի ապահովման և բարձր որակով մասնագետների պատրաստման նպատակով` համալսարանի գիտահետազոտական և ինովացիոն գործունեության կատարելագործում, ծավալների մեծացում և ընդլայնում:
- Տրամադրվող կրթական ծառայությունների և գիտահետազոտական աշխատանքների որակի ապահովում և համադրում:



- Համալսարանի շահակիցների հետ կայուն հետադարձ կապի հաստատում, նրանց կարիքների վերհանման, պահանջների ուսումնասիրություն և վերլուծության իրականացում:
- Համալսարանի գործունեության բոլոր տեսակների և ոլորտների գործունակության որակին վերաբերող տվյալների բազայի ստեղծում և ապահովում:
- Համալսարանի շրջանավարտների աշխատաշուկայում պահանջվածության և նրանց կարիերայի զարգացման ապահովում:
- Հավաստի և ամբողջական ինֆորմացիայի և վերլուծության վրա հիմնված որոշումների կայացման սկզբունքի ներդրում:
- Համաշխարհային կրթական տարածքին համալսարանի ակտիվ ինտեգրման ապահովում:

7.2.5. Որակի ոլորտի քաղաքականության իրականացման սպասվող արդյունքները

Որակի ապահովման ոլորտում քաղաքականության իրականացումը ենթադրում է հետևյալ արդյունքները.

- Բարձրացնել համալսարանի աշխատակիցների պատասխանատվությունը՝ ուսումնական, գիտական և վարչարարական գործունեության բոլոր մակարդակներում՝ միտված կրթական ծառայությունների որակի կառավարմանը:
- Ապահովել շահակիցների բավարարվածությունը համալսարանի կրթական ծառայությունների որակից:
- Թափանցիկ դարձնել կրթական ծառայությունների որակի կառավարման և գնահատման գործընթացը:
- Որակի գաղափարը իրականացնելու համար բարձրացնել համալսարանական հանրության աշխատանքի մոտիվացիան:
- Բարձրացնել համալսարանի հեղինակությունը կրթական միջավայրում և աշխատանքի շուկայում:
- Ստեղծել կրթական ծառայությունների որակի կառավարման համակարգի կայուն զարգացում:



**8. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԻՋԵՎ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ**

❖ *Համալսարանի խորհուրդը՝*

- հաստատում է որակի ապահովման համալսարանական քաղաքականությունը, որակի շարունակական բարձրացման ռազմավարությունը, համալսարանի տարեկան հաշվետվության շրջանակներում քննարկում է որակի ապահովման գործընթացների արդյունքները և առաջադրում բարելավման խնդիրները:

❖ *Համալսարանի գիտական խորհուրդը՝*

- իրականացնում է որակի ապահովման ներհամալսարանական գործընթացների արդյունքների և գիտական խորհրդի որակի ապահովման հանձնաժողովի եզրակացությունների քննարկումն ու հաստատումը:
- հաստատում է որակի ապահովմանը և կառավարմանը ուղղված ընթացակարգերը, կրթական ծրագրերի համալսարանական ստանդարտներն ու որակավորման պահանջները, որակի ապահովմանն առնչվող կանոնակարգային և նորմատիվ այլ փաստաթղթեր:

❖ *Համալսարանի ռեկտորը՝*

- ղեկավարում է համալսարանի որակի ապահովման քաղաքականության և համապատասխան ռազմավարության մշակման աշխատանքները, ուղղորդում դրանց իրականացումը, ապահովում որակի ապահովման համակարգի ներդաշնակ գործունեությունը, կարգաբերում համակարգի փոխկապակցությունը համալսարանական կառավարման այլ համակարգերի հետ:

❖ *Համալսարանի գիտական խորհրդի կրթության որակի վերահսկման հանձնաժողովը՝*

- հանդես է գալիս որպես փորձագիտական և վերահսկողական մարմին՝ գնահատելու որակի ապահովման ընթացակարգերի և չափանիշների համապատասխանությունն ընդունված չափորոշիչներին,
- նախապատրաստում և գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում որակի ապահովման վերաբերյալ կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերը:

❖ *Համալսարանի Ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտորը՝*

- իրականացնում է որակի ապահովման համալսարանական համակարգի օպերատիվ կառավարումն ու վերահսկումը,
- ապահովում է գործառնական կապերն ու փոխգործակցությունը ներգրավված հիմնական կառույցների միջև, մասնավորապես ֆակուլտետների (դեպարտամենտ-



ների), որակի ապահովման մասնագիտացված կառույցի և այլ առնչվող ստորաբաժանումների միջև:

- ❖ *Համալսարանի Որակի ապահովման մասնագիտացված կառույցը (ԿԲՌՊՏՆ բաժինը)*՝
 - մշակում է որակի ապահովմանը ուղղված ընթացակարգեր և մեխանիզմներ, հետևվում և աջակցում է դրանց իրականացմանը համալսարանի ստորաբաժանումներում,
 - պատասխանատու է ուսումնառության և դասավանդման որակի գնահատմանն առնչվող գործընթացների համակարգման համար,
 - պատասխանատու է դասավանդման և ուսումնառության որակի չափման գործիքակազմի և համակարգված մոտեցումների մշակման համար,
 - մշակում է ընթացակարգեր կրթական ծրագրերի և առանձին դասընթացների (մոդուլների) մակարդակում դասավանդման և ուսումնառության որակի գնահատման համար,
- ❖ *Համալսարանի Ուսումնամեթոդական կենտրոնը*՝
 - ապահովում է կրթական ծրագրերի մշակման և իրականացման որակի հսկողությունը, ստուգում դրանց համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին,
 - կոորդինացնում և վերահսկում է ուսումնական ստորաբաժանումներում կրթական ծրագրերի որակի ապահովման գործառույթների և ընթացակարգերի իրականացումը,
 - կազմակերպում է համալսարանի ինքնագնահատման գործընթացը և հաջորդող գործողությունների պլանավորումն ու վերահսկումը:
- ❖ *Համալսարանի Ուսումնական ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ֆակուլտետների/դեպարտամենտների) ղեկավարները*՝
 - պատասխանատու են ստորաբաժանման մակարդակով որակի ապահովման և վերահսկման բոլոր գործառույթների կազմակերպման և իրականացման համար,
 - կազմակերպում են ստորաբաժանման կրթական ծրագրերի մշակման, իրականացման մոնիթորինգի, պարբերական վերանայման ու կատարելագործման գործընթացները՝ որակի ապահովման ընթացակարգերին համապատասխան,
 - ստորաբաժանման շրջանակներում ապահովում են համալսարանի որակի ապահովման քաղաքականության ու ռազմավարության իրականացումը,
 - ապահովում են անհրաժեշտ ռեսուրսներ (դասախոսական կազմ, լաբորատոր սարքավորումներ, գրականություն և այլն) և ուսումնառության օժանդակող ծառայություններ կրթական ծրագրերի իրականացման համար՝ ծրագրերի չափորոշիչներին համապատասխան,



- կազմակերպում են ստորաբաժանման ինքնավերլուծություն՝ ինքնագնահատման գործընթացի շրջանակներում:
- ❖ *Համալսարանի Որակի ապահովման ֆակուլտետային հանձնաժողովները՝*
 - վերահսկում են ֆակուլտետներում կրթական ծրագրերի պլանավորման, մշակման, փոփոխման և դրանց որակի ապահովման գործընթացների իրականացումը,
 - վերահսկում են ծրագրերի պատշաճ ռեսուրսային և մեթոդական ապահովվածությունը,
 - պատասխանատու են ֆակուլտետում ուսուցման որակի ապահովման և ներքին վերահսկման, ինչպես նաև համալսարանի մակարդակով ընդունվող որոշումների հետևողական իրագործման հսկողության համար:
- ❖ *Համալսարանի ուսանողները՝*
 - ընդգրկված են ուսման որակի գնահատման գործընթացներում՝ մասնակցելով ուսանողական հարցումներին և շրջանավարտների բավարարվածության հարցումներին,
 - ընդգրկված են համալսարանի գիտական խորհրդում և նրա որակի ապահովման հանձնաժողովում,
 - մասնակցում են համալսարանի որակի ապահովման գործընթացներին որպես ուսանողական ինքնակառավարման մարմինների (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություններ և այլն) ներկայացուցիչներ,
 - համաձայն սահմանված ընթացակարգի՝ մասնակցում են ստորաբաժանման ինքնավերլուծության գործընթացին:
- ❖ *Արտաքին գնահատողները (փորձագետները, գործատուները)՝*
 - կատարում են կրթական ծրագրերի արտաքին փորձաքննություն,
 - ընդգրկված են շրջանավարտների եզրափակիչ (ամփոփիչ) ատեստավորման հանձնաժողովներում,
 - համալսարանի նախաձեռնությամբ կարող են մասնակցել ուսանողների ընթացիկ և կիսամյակային գնահատման գործընթացներին,
 - մասնակցում են կրթական ծրագրերից և շրջանավարտների մասնագիտական որակից գործատուների բավարարվածության հարցումներին: